Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի մայիսի 27-ի N 12 - 1 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

Դ. Ռ. Գալոյան

27 մայիսի 2022 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՏՀ) պատվավոր կոչումների շնորհման կարգն ու պայմանները:

2. ՀՊՏՀ պատվավոր կոչումը շնորհվում է ֆակուլտետի գիտական խորհրդի ներկայացմամբ՝ ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ:

3. ՀՊՏՀ-ում սահմանվում են «ՀՊՏՀ պատվավոր պրոֆեսոր», «ՀՊՏՀ պատվավոր դոկտոր» և «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչումները, որոնք շնորհվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջները բավարարող անձանց:

4. «ՀՊՏՀ պատվավոր պրոֆեսոր» կոչումը շնորհվում է՝

1) օտարերկրյա պետությունների գիտակրթական կենտրոնների պրոֆեսորներին՝ ՀՊՏՀ-ի հետ տևական և արդյունավետ համագործակցության համար,

2) ՀՊՏՀ-ում առնվազն 30 տարվա գիտամանկավարժական ստաժ ունեցող, առնվազն 5 գիտությունների թեկնածու ղեկավարած աշխատողներին՝ աշխատանքային պարտականություններից կամ աշխատանքից ազատվելու դեպքում:

5. «ՀՊՏՀ պատվավոր դոկտոր» կոչումը տրվում է՝

1) պետական, քաղաքական, հասարակական գործիչներին, հռչակավոր գիտնականներին և մշակութային գործիչներին (այդ թվում՝ օտարերկրացի),

2) օտարերկրյա պետությունների գիտակրթական կենտրոնների գիտնականներին՝ ՀՊՏՀ-ի հետ տևական և արդյունավետ համագործակցության համար:

6. «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչումը շնորհվում է ՀՊՏՀ այն աշխատակցին, ով ունի առնվազն 30 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ և ամբիոնի վարիչի պաշտոնում աշխատել է առնվազն 10 տարի, տվյալ գիտակրթական ուղղության շրջանակներում մասնագիտական հեղինակություն է վայելում, ինչպես նաև բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկին՝

1) մասնագիտական աշխատանքի համար արժանացել է ՀՀ կամ օտարերկրյա պետությունների պետական պարգևների,

2) հրատարակել է առնվազն 150 մամուլ ուսումնական և մասնագիտական գիտական աշխատանք,

3) եղել է ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան առնվազն 10 գիտությունների թեկնածուի գիտական ղեկավար կամ 3 գիտությունների դոկտորի խորհրդատու:

7. «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» կոչումը շնորհվում է ՀՊՏՀ այն աշխատակցին, ով ամբիոնում կատարում է իր գիտական աստիճանին և գիտական կոչմանը համապատասխան գիտակրթական գործունեություն:

8. Ամբիոնի պատվավոր վարիչը կարող է ամբիոնում կատարել խորհրդատուի գործառույթներ՝ ամբիոնի գիտակրթական, մեթոդական, դաստիարակչական և այլ հարցերով:

9. ՀՊՏՀ պատվավոր կոչումների շնորհման մասին որոշումն ընդունվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի նիստում, բաց քվեարկությամբ, նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

10. ՀՊՏՀ պատվավոր կոչումներ ստացած անձանց հաշվառումն իրականացնում է ՀՊՏՀ գիտական քարտուղարը: